«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հովսեփյան Ազապի

Ուսումնական հաստատություն՝ Աշնակի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց

2022

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Բարոյական արժեքներ---------- 4

Եզրակացություն---------- 16

Օգտագործված գրականության ցանկ---------- 17

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Հարկ է նշել, որ հանրակրթության պետական կրթակարգում և հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչներում որոշակի ուշադրություն է դարձվում բարոյական արժեքներին:

Մեր կարծիքով բարոյական դաստիարակությունը պետք է իրականացնել ոչ թե աշակերտի վարքի մեջ այս կամ այն շեղումը նկատելիս համապատասխան խրատներ տալով, այլ յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում դաստիարակության բովանդակությունը կազմող արժեքների հետևողական ձևավորման միջոցով: Հարկ է նկատել, որ հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկա ունի նման արժեքների ձևավորման համար անհրաժեշտ կրթական ներուժ:

Բարոյական դաստիարակության հիմնական էությունը անձի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն է:

Թեմայի նպատակը: Ուսումնասիրել բարոյական արժեքներ:

Դպրոցականի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումը կախված են տվյալ երկրի սոցիալական պայմաններից , այն հանրությունից , որում նա ապրում և գործում է: Եթե դրանք իրենց բարձրության վրա չեն գտնվում , եթե չկան նյութական բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ, քաղաքական առողջ մթնոլորտ, քաղաքակրթություն, ապա այնտեղ անձի բարոյականությունն ու բարոյական զարգացումը կայուն լինել չեն կարող:

Ինչպես բարոյական վարքի սովորույթների դաստիարակումը, այդպես էլ բարոյական գիտակցման ձևավորումը բարդ գործընթաց է և ձեռք է բերվում մի շարք մեթոդների օգտագործումով: Դրանց միջոցով է դաստիարկ ուսուցիչը հասնում այն բանին, որ երեխաները

գիտելիքներ յուրացնեն բարոյականության և նրա կանոնների մասին, նրանց մեջ ձևավորվի բարոյական պատկերացումների, հասկացությունների և արժեքների համակարգ։

Բարոյական արժեքներ

Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է: Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքում: Բարոյական զարգացմանը նպաստում են անձի շփումները, հաղորդակցումները, որոնք անառարկելիորեն ներգործում են նրա գործողությունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը:

Բարոյական դաստիարակության գերագույն նպատակը ոչ միայն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է, այլև նրա կարևոր գործառնությունն է, հասարակությանը այնպիսի մարդու հավելումը, որը մշտապես կկատարի բարոյական գործողություններ ու արարքներ՝ հօգուտ հասարակության և հօգուտ մարդու:

Բարոյական արժեքներով դաստիարակված մարդը առաքինի է, բարեկիրթ: Այդպիսի մարդու նիստուկացը, գործողություններն ու արարքները , մարդկանց հետ հարաբերությունները, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը, յուրահատուկ են և օրինակելի: Բարոյական զարգացումից զուրկ մարդը հասարակության համար անտանելի բեռ է:

Ուսուցչի խնդիրը պետք է լինի դրական արարքների կատարումը դարձնել դպրոցականի համար մշտական սովորույթ, նրա բնավորության կայուն գիծը, որպեսզի նա միշտ կատարի դրական արարքներ և դրա հիման վրա ձևավորի վարքի դրական կուլտուրա: Հեգելը գրում էր.«Երբ մարդը կատարում է այս կամ այն բարոյական արարքը, դրանով դեռևս առաքինի չէ: Նա առաքինի է այն դեպքում , երբ վարքագծի այդ եղանակը դառնում է նրա բնավորության մշտական գիծը»:[1]

Բարոյական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ են դասվում անձի գիտակցության, զգացմունքների ու վարքի ձևավորումը: Երկրորդ խմբի մեջ են մտնում բարոյական բարձր որակները՝ հումանիզմը, կոլեկտիվիզմը, հայրենասիրությունը, գիտակցական կարգապահությունը, քաղաքացիական դաստիարակությունը և այլն:

Հմուտ ուսուցիչը պետք է բարոյական դաստիարակության ուղիներ որոնի, աշակերտների մեջ ձևավորի բարոյական հասկացությունները ճիշտ ըմբռնելու կարողություններ:

Նա իր օրինակով պետք է բարություն ու համեստություն սերմանի:

---

[1] Логинова В. И. Саморукова П. Г. Дошкольная педагогика. Учебник для студентов педагогических вузов (1 часть). Москва. 2005, 256 с.

Շատ կարևոր են բարոյական թեմաներով զրույցները: Նախօրոք լավ մշակված հարցերի միջոցով կարելի է քննարկել որևէ անձի վարքագիծը, բնավորության գծերը, արարքները, վերլուծել որևէ կինոնկար,, կարդացած վեպի հերոսների հոգեբանական առանձնահատկությունները և այլն:

Բարոյական թեմայով բանավեճի նյութ կարող է լինել շրջապատի կյանքի առօրյան, հասարակության զարգացմանը խոչընդոտող պատճառները , սոցիալական անարդարությունները, մեծ իրադարձությունների պատճառների բացահայտումը և այլն:

Մանկավարժը պետք է իմանա, թե կրտսեր, դեռահասության տարիքներում բարոյական ի՞նչ որակներ սերմանի:

Նա պետք է կարողանա գտնել բարոյական զարգացման առանցքը, հիմքը: Դրանում է երևում ուսուցչի մանկավարժական վարպետությունը:

Դեռահասության տարիքում երեխան ամենուր է՝տանը, դպրոցում, բակում, թաղամասում, հասակակիցների շրջապատում և այլն: Այս վայրերում էլ նա ձեռք է բերում մերձավոր շրջապատի միջավայրը յուրացնելու փորձ:

Դեռահասի համար այս տարիքում մեծ նշանակություն ունի օրինակի ուժը: Նա դառնում է յուրօրինակ հետաքրքրասեր առաջին հերթին իրենց շրջապատող մարդկանց համար: Նրանց մեջ հայտնաբերում է այնպիսի որակներ,որ ինքը չունի, դրա համար կողմնորոշվում է դեպի նրանց օրինակը:[2]

Մանկավարժի խնդիրն է դրական բարոյական օրինակի ձևավորումը և բացասական արարքներից աշակերտներին ետ պահելը, իսկ դրան նա պետք է հասնի իր ճիշտ կողմնորոշման, մանկավարժական տակտի, վարպետության և հեղինակության շնորհիվ:

Դեռահասության տարիքում ուսուցիչը իր սանին կողմնորոշում է բոլոր արարքներում, ապա օգնում նրան յուրացնելու բարոյական զարգացմանն ու բարոյական հասկացություններին վերաբերող գիտելիքներ, դրանք դարձնում նրա համոզմունքները, նրա համար մշակում ինքնադաստիարակության ծրագիր:

Նա խորհուրդներ ու ցուցումներ է տալիս դեռահասին , թե ինչպես կիրառել և իրացնել այդ ծրագիրը:

Հմուտ մանկավարժը, օգտագործելով ուսումնական առարկաների բոլոր հնարավորությունները, պատանուն կարող է զինել բարոյականությանը վերաբերող տեսական գիտելիքներով: Նա կարող է կազմակերպել բարոյական թեմաներով զրույցներ, դասախոսություններ և բանավեճեր:

---

[2] Логинова В. И. Саморукова П. Г. Дошкольная педагогика. Учебник для студентов педагогических вузов (1 часть). Москва. 2005, 256 с.

Բարոյական արժեքներ ունեցող մարդիկ հստակ հասկանում են՝ ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ: Նրանց վարվելակերպը պայմանավորված չէ պահի թելադրանքով, այլ հիմնված է հստակ սկզբունքների վրա, որոնք նրանց համար հանդիսանում են հուսալի ուղեցույց, և որոնց համաձայն նրանք վարվում են, անգամ երբ իրենց ոչ ոք չի տեսնում:

Երեխաները աջից ու ձախից անընդհատ «ռմբակոծվում են» ճշտի ու սխալի վերաբերյալ աղավաղված տեսակետներով, լինի դա իրենց դասընկերների շրջապատում, իրենց լսած երաժշտության, դիտած ֆիլմերի կամ հեռուստահաղորդումների միջոցով: Այդ ամենի ազդեցության ներքո նրանք գուցե սկսեն հարցականի տակ դնել ճշտի ու սխալի վերաբերյալ իրենց ունեցած համոզմունքները:[3]

Սա հատկապես լուրջ խնդիր է դեռահասության տարիքում: Երեխաների դաստիարակության վերաբերյալ մի գրքում ասվում է, որ մինչև այդ տարիքը երեխաները արդեն «պետք է հստակ հասկանան, որ հասակակիցները և զանգվածային տեղեկատվական միջոցները մեծ ճնշում են բանեցնում՝ ստիպելով հետևել որոշակի տենդենցների՝ ընդունված ու ճանաչված լինելու համար: Նրանք նաև պետք է կարողանան որոշումներ կայացնել իրենց սեփական արժեքների ու նախասիրությունների հիման վրա, անգամ եթե դրա համար հարկ լինի իրենց ընկերների կարծիքին դեմ գնալ»: Ուրեմն հստակ է, որ երեխաների բարոյական դաստիարակությունը անհրաժեշտ է սկսել նախքան դեռահասության շրջանը:

Ինչպես բարոյական վարքի սովորույթների դաստիարակումը, այդպես էլ բարոյական գիտակցման ձևավորումը բարդ գործընթաց է և ձեռք է բերվում մի շարք մեթոդների օգտագործումով: Դրանց միջոցով է դաստիարկ ուսուցիչը հասնում այն բանին, որ երեխաները գիտելիքներ յուրացնեն բարոյականության և նրա կանոնների մասին, նրանց մեջ ձևավորվի բարոյական պատկերացումների, հասկացությանների և արժեքների համակարգ:

Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է: Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքում: Բարոյական զարգացմանը նպաստում են անձի շփումները, հաղորդակցումները, որոնք անառարկելիորեն ներգործում են նրա գործողությունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը:

Ինչպես դասերի ընթացքում, այնպես էլ հասարակական աշխատանքներ կատարելով սովորողները զարգացնում են արժեքների իրենց համակարգը. դրանց թվում բարոյական արժեքները. փոխադարձ հարգանք և իրավահավասարություն, ազնվություն, անձնվիրություն, վստահություն, զսպվածություն, համբերություն, արդարամտություն: Ուսուցիչները կարող են

[3] Թոփուզյան Ա. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Երևան: «Լինգվա»: 2009թ.: 298 էջ:

աշակերտների հետ զրույց - քննարկումներ կազմակերպել՝ խնդրելով նրանց մտածել այսպիսի հարցերի շուրջ՝ նշված որակներից ո՞րը դուք ունեք, ինչպե՞ս զարգացնել դեռ չունեցածը:[4]

Բարոյական դաստիարակության առանցք կարող են հանդիսանալ այն նորմերը, որոնք համամարդկային արժույթներ են: Դեռևս կրտսեր տարիքում բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է: Հետևապես տարրական դասարաններում դասվարի խնդիրն է զբաղվել դրանով նաև: Հենց այդ տարիքում է, որ երեխան պետք է ըմբռնի , որ ինքը չի կարող ապրել միայնակ, հասարակությունից ու մարդկանցից կտրված: Որ մարդկանց հետ հաղորդակցությունը, շփումը, փոխհարաբերությունները դեպի մարդասիրությունը տանող ճանապարհներ են:

Դեռահասության տարիքում երեխան ամենուր է (տուն, դպրոց, բակ, հասակակիցների միջավայր, շրջապատ և այլն): Ահա Ահա այս հանգամանքն էլ նպաստում է ձեռք բերելու մերձավոր շրջապատի միջավայրը յուրացնելու փորձ: Դեռահասը շրջապատող մարդկանց մեջ հայտնաբերում է այնպիսի որակներ, որ ինքը չունի, ուստի կողմնորոշվում է դեպի նրանց օրինակը, իր համար որոնում է իդեալ: Այս տարիքում դաստիարակը իր սանին կողմնորոշում է բոլոր արարքներում, ապա օգնում նրան՝ յուրացնելու բարոյական զարգացմանն ու բարոյական հասկացություններին վերաբերող գիտելիքներ, դրանք դարձնում նրա համոզմունքները:[5]

Դեռահասոության տարիքի հոգեբանական կարևորագույն բնութագիրը անձնավորության ինտենսիվ բարոյական ձևավորումն է, բարոյական գիտակցության ձևավորումը, վարքի բարոյա-էթիկական նորմաների տիրապետումը: Դեռահաս տարիքում տեղի է ունենում ոչ միայն ֆիզիկական հասունացում, այլ նաև անձնավորության ակնառու հասունացում, որն իրականանում է շրջապատող իրականության ազդեցության տակ, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի պրոցեսում, դաստիարակների ու կոլեկտիվի գաղափարական ղեկավարությամբ: Դեռահաս տարիքը աշխարհայացքի, բարոյական համոզմունքների, սկզբունքների ու իդեալների, գնահատման դատողությունների ձևավորման տարիք է, որոնցով դեռահասն սկսում է ղեկավարվել իր վարքում; Այս տարիքոում է դրվում բարոյական գիտակցության հիմքերը: Նայած այն բանին, թե ինչպիսի բարոյական փորձ է ձեռք բերոում դեռահասը, ինչպիսի բարոյական գործունեություն ունի նա, ըստ այդմ էլ կձևավորվի նրա անձնավորությունը:

Կրտսեր դպրոցական տարիքում դրվում է բարոյական վարքի հիմքը, յուրացվում են բարոյական նորմաները և վարքի կանոնները, սկսվում է ձևավորվել անձնավորության հասարակական ուղղվածությունը: Կրտսեր դպրոցականների բարոյական գիտակցությունը

---

[4] Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն: Երևան: «Զանգակ-97»: 2008թ.: 288 էջ:
[5] Лисина М. И. Обшение, личность и психика ребенка. Под редакцией Рузской А. Г. М.: Институт практической психологи. Воронеж: 2001, 384 с.

էական փոփոխությունների է ենթարկվում առաջինից մինչև չորրորդ դասարաններում: Բարոյական գիտելիքները, պատկերացումներն ու դատողությունները տարիքի վերջում նկատելիորեն հարստանում են, դառնում ավելի գիտակցված, բազմակողմանի, ընդհանրացված:

Դեռահասները, սխալ ըմբռնելով բարոյական շատ հասկացություններ, ոչ ճիշտ գնահատելով անձնային առանձին որակներ, ձգտելով անկախության և ինքնուրույնության, փորձելով դրսևորել իրենց կամքը, զարգացնում են այն հատկությունները, որոնք օբյեկտիվորեն բացասական են և վերացնում են դրականը: Ուսուցիչ-դաստիարակի խնդիրն է տակտով և հմտորեն հաղթահարել ոչ ճիշտ հայացքները, դեռահասին հեռացնել մոլորություններից, բայց ոչ չոր ու ձանձրալի խրատներով, այլ անկեղծ, սրտագին բարեկամական զրույցներով: Պետք է այնպես կազմակերպել բարոյական դաստիարակության գործը, որ նա հասկանա բարոյական նորմաների ճշմարտացիությունը և առօրյա կյանքում դրանց հետևելու անհրաժեշտությունը: Դեռահասը պետք է գնահատի այնպիսի հատկանիշները, որպիսին են աշխատասիրությունը, հաստատակամությունը, ընկերասիրությունը, պարտքի զգացումը, սեփական արժանապատվությունը:[6]

Բարոյական դաստիարակության տեսական հիմքերը բխում են բարոյագիտությունից, որն ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի չափանիշներ՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով: Բարոյականությունը բարոյական վարքի, նորմերի և կանոնների գիտակցման աստիճան է, ներքին սուբյեկտիվ դիրքորոշում աշխարհի հանդեպ: Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է. այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

- Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:
- Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում:
- Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ:
- Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ: [7]

---

[6] Лисина М. И. Обшение, личность и психика ребенка. Под редакцией Рузской А. Г. М.: Институт практической психологи. Воронеж: 2001, 384 с.

[7] Божович Л. И. Личность и ее формирование в детском возрасте. СПб.: Питер. 2008. 400 с.

Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների դաստիարակչական ներուժով, դաստիարակող մեծահասակների մանկավարժական վարպետությամբ:

Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: Այն կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից: Նախադպրոցական տարիքում երեխան չափազանց զգայուն է ցանկացած ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը և, ընդօրինակելով մեծահասակներին, փորձում է համապատասխանել մարդկային կենսակերպին բնորոշ չափանիշներին, դրսևորումներին:

Արտաքին աշխարհի հանդեպ երեխայի դիրքորոշումն իրենից ներկայացնում է բարոյական զգացմունքների և պատկերացումների, բարոյական սովորությունների և վարքագծի ամբողջություն, որն ամփոփ ձևով կարելի է բնութագրել իբրև բարոյական կամ բարոյականության որակ: Փաստորեն, բարոյական որակը համալիր բարոյական հատկություն է, այն արդյունք է զարգացած բարոյական գիտակցության: Բարոյական գիտակցության հետ մեկտեղ բարոյական դաստիարակության ընթացքում ձևավորվում են անձնային կարևորագույն հատկություններ, որոնք դաստիարակվում են բարոյական գիտակցությունից անկախ և վեր են ածվում սոցիալական զգացմունքների: Այդպիսի հատկություններից են, օրինակ, բարությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը, մաքրասիրությունը:

Աստիճանաբար երեխայի կողմից գիտակցվում և արժևորվում են նաև նշված զգացմունքներ, որոնք համալրում են նրա բարոյական որակը: Բարոյական դաստիարակության երկու կողմերն էլ ենթադրում են մանկավարժի ակտիվ մասնակցություն և աջակցում: Մանկավարժը բարոյական դաստիարակության ընթացքում հանդես է գալիս «սոցիալական ուղեկցողի» դերում:

Բարոյական դաստիարակությունն իրականացվում է որոշակի միջոցներով: Նախադպրոցական տարիքում արդյունավետությամբ կիրառվում են գեղարվեստական միջոցները, որոնք նպաստում են երեխայի բարոյականության զարգացմանը գեղագիտական շեշտադրումներով: Գեղարվեստական միջոցներից հարկ է հատուկ առանձնացնել մանկական գեղարվեստական գրականությունը: Հեքիաթների հերոսների գործողությունները մեծ հուզականությամբ են ընկալվում երեխաների կողմից և խորը հետք թողնում նրանց բարոյական զգացմունքների և պատկերացումների վրա: Հեքիաթների հերոսական կերպարները ընդօրինակման արժանի բարոյական նմուշներ են: [8]

[8] Бреслав Г. М. Эмоциональные особенности формирования личности в детстве. М.: 2008 144 с.

Բարոյական դաստիարակության ընթացքում անգնահատելի է բնության դերը, բնության հետ շփման ընթացքում ստացած դրական հուզական լիցքավորումը:

Բարոյական դաստիարակության միջոց է երեխայի ինքնուրույն գործունեությունը՝ խաղային, աշխատանքային, կերպարվեստային, կառուցողական և ուսումնական: Սակայն Մ. Ի. Լիսինան և Ա. Գ. Ռուզսկայան մանկան գործունեության ձևերից հատուկ նշանակություն են տալիս մեծահասակների հետ հաղորդակցմանը և ինքնուրույնությանը հասակակիցների հետ հարաբերվելու ընթացքում:

Եվ, ի վերջո, բարոյականության հզոր միջոց է երեխային շրջապատող մթնոլորտը, այն սոցիալական միջավայրը, ուր երեխան ապրում և մեծանում է: Սիրո և փոխադարձ հարգանքի հիմունքներով կառուցված բարյացակամ մթնոլորտը, ընկերական փոխվստահելի հարաբերությունները խթանում են բարոյական դաստիարակության գործընթացը և նպաստում սոցիալական զգացմունքների զարգացմանը:

Այսպիսով, բարոյական որակների ձևավորման ընթացքում երեխան ձեռք է բերում երեք կարևորագույն հատկանիշ՝ բարոյական գիտակցություն, բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհի նկատմամբ և բարոյական վարքագիծ: Նշված հատկանիշներն օգնում են կառուցել արժևորված հարաբերությունների համակարգ՝ բարոյականության սկզբունքներով՝ ուղղված սոցիալական զգացմունքների ձևավորմանը:[9]

Ըստ բարոյական զարգացման տեսության՝ բարոյական վարքագծի հիմքը կազմող բարոյական դատողություններում առանձնացնում են զարգացման նույնականացման վեց փուլ, որոնցից յուրաքանչյուրում բարոյական երկընտրանքների պատասխանները նախորդից առավել ադվեկատ են: Քոլբերգը բարոյական զարգացման տեսությունը կառուցել է Պիաժեի կողմից ուսումնասիրված տարիքային սահմաններից հեռու: Պիաժեն ևս համարում էր, որ տրամաբանությունն ու բարոյականությունը զարգանում են կառուցողական փուլերի հիման վրա: Զարգացնելով Պիաժեի աշխատանքները՝ Քոլբերգը սահմանել է, որ բարոյական զարգացման գործընթացում գլխավոր դեր է խաղում արդարություն հասկացությունը, և որ այս զարգացումը տեղի է ունենում մարդու ողջ կյանքի ընթացքում: Այս հասկացության օգտագործումը երկխոսություն է առաջացրել նման հետազոտությունների փիլիսոփայական հետևանքների մասին:

Բարոյական բանականության մինչպայմանական մակարդակը հատկապես տարածված է երեխաների մոտ, չնայած մեծահասակները ևս կարող են ցուցադրել դատողության նման մակարդակ: Անհատն այս մակարդակում դատում է գործողության բարոյականության մասին դրա անմիջական հետևանքներով: Մինչպայմանական մակարդակը բաղկացած է բարոյական

[9] Божович Л. И. Личность и ее формирование в детском возрасте. СПб.: Питер. 2008. 400 с.

զարգացման առաջին և երկրորդ փուլերից և բացառապես կապված է անհատի եսակենտրոն դիրքորոշման հետ: Այս մակարդակում գտնվող երեխան դեռ չի յուրացրել և չի ներքնայնացրել համընդհանուր նորմերն առ այն, թե ինչն է ճիշտ, և ինչը՝ սխալ. փոխարենը նա կենտրոնանում է գործողությունների արդյունքում առաջացող հավանական արտաքին հետևանքների վրա:

Այս մակարդակում երեխան արդեն արձագանքում է մշակութային կանոններին և «լավի» ու «վատի», «արդարի» ու «անարդարի» սահմաններին, բայց հասկանում է այդ սահմանները գործողությունների ֆիզիկական կամ զգայական հետևանքների իմաստով (պատիժ, պարգևատրում, առավելությունների փոխանակում) կամ այն անձանց ֆիզիկական իշխանության իմաստով, որոնք կարևորություն են տալիս այդ կանոններին ու սահմաններին (ծնողներ, ուսուցիչներ և այլն): Երեխայի պահվածքը հիմնված է բացառապես շահի սկզբունքի վրա և գնահատվում է հետագա հետևանքների տեսանկյունից:[10]

Բարոյականության մեջ հասարակական անհրաժեշտությունը հասարակության կամ հասարակարգերի պահանջմունքները, շահերը արտահայտվում են տարերայնորեն ձևավորված և ընդհանուր ճանաչում գտած պատվիրանների ու գնահատականների ձևով, որոնք ամրապնդվում են մասսսայական օրինակի, սովորույթի, ավանդույթի, հասարակական կարծիքի ուժով: Ուստի բարոյականության պահանջներն ընդունվում են անդեմ պիտոյականության ձև, հավասարապես բոլորին ուղղված, բայց ոչ մեկից չելնող հրամանի, պատվիրանի ձև: Այդ պահանջները հարաբերականորեն կայուն բնույթ են կրում:

Ընդունված կարգի ուժով պահպանվող հասարակ սովորույթից կամ ավանդույթից դրանք տարբերվում են նրանով, որ ստանում են գաղափարական հիմնավորում այն պատկերացման ձևով, թե ինչպես է պատշաճ մարդուն ապրել ու վարվել:

Ի տարբերություն իրավունքի՝

- ամեն մեկի կողմից բարոյական պահանջների կատարումը վերահսկվում է բոլորի կողմից, ընդ որում այս կամ այն անհատի բարոյական հեղինակությունը կապված չէ որևէ պաշտոնական լիազորության հետ
- բարոյականության պահանջները սանկցիա են ստանում միայն հոգևոր ներգործության ձևերով (հասարակական գնահատական, կատարված արարքների հավանում կամ դատապարտում):

Դրանով պայմանավորված է բարոյականության մեջ հասարակական գիտակցության մեծ դերը, քան սոցիալական հսկողության մյուս ձևերի դեպքում, ընդ որում այդ գիտակցությունը կարող է արտահայտվել ինչպես հասկացությունների ու դատողությունների ռացիոնալ ձևերով, այնպես էլ զգացմունքների, մղումների, հակումների էմոցիոնալ ձևերով:

---

[10] Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն: Երևան: «Զանգակ-97»: 2008թ.: 288 էջ:

Եզրակացություն

Բարոյական դատողությունների պայմանական մակարդակը բնորոշ է դեռահասներին և մեծերին: Անհատն այս մակարդակում դատում է գործողությունների բարոյականության մասին՝ դրանք համեմատելով հասարակական կարծիքի և ակնկալիքների հետ: Պայմանական մակարդակը բաղկացած է բարոյական զարգացման երրորդ և չորրորդ փուլերից: Ավանդական բարոյականությունը բնութագրվում է հասարակական կոնվենցիաների ընդունմամբ առ այն, թե ինչն է սխալ, և ինչը՝ ճիշտ: Այս մակարդակում անհատը ենթարկվում է կանոններին և հասարակության նորմերին, նույնիսկ եթե դրանք խախտելու դեպքում հետևանքներ նախատեսված չեն: Կանոններին և համաձայնություններին հետևելը փոքր-ինչ խիստ է, նրանց համապատասխանությունը կամ արդարությունը հազվադեպ են կասկածի տակ դրվում:

Այս մակարդակում ինքնանպատակ է դառնում սեփական ընտանիքի, խմբի կամ ազգի սպասումների իրականացումը՝ առանց դիտարկելու դրանց անմիջական կամ տեսանելի հետևանքները: Այդ դիրքորոշումը պայմանավորված է ոչ միայն կոնֆորմիզմով, անձնական սպասելիքների և հասարակական կարգին հարմարմամբ, այլև օրինապահությամբ, ակտիվ աջակցությամբ և կարգուկանոնի արդարացմամբ և այդ կարգուկանոնի կրողը համարվող անհատի կամ խմբի հետ նույնականացմամբ: Տեղի է ունենում հասարակության մեջ ընդունելի վարքագծի կանոնների գիտակցում և դրանում առկա արժեքների ընդունում: Հասարակական ընդունումը դառնում է անձնական հետքրքրություններից կարևոր:

Հետպայմանական մակարդակում, որը հայտնի է նաև որպես ինքնավար բարոյական սկզբունքների մակարդակ, զարգանում է այն գիտակցությունը, որ անհատները հասարակությունից առանձնացված օբյեկտներ են, և որ անհատի սեփական տեսակետը կարող է գերակայություն ունենալ ընդհանուր հասարակության տեսակետի վրա. այսինքն՝ մարդիկ կարող են չհնազանդվել իրենց սկզբունքներին չհամապատասխանող կանոններին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թոփուզյան Ա. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Երևան: «Լինգվա»: 2009թ.: 298 էջ:
2. Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն: Երևան: «Զանգակ-97»: 2008թ.: 288 էջ:
3. Божович Л. И. Личность и ее формирование в детском возрасте. СПб.: Питер. 2008. 400 с.
4. Бреслав Г. М. Эмоциональные особенности формирования личности в детстве. М.: 2008 144 с.
5. Лисина М. И. Обшение, личность и психика ребенка. Под редакцией Рузской А. Г. М.: Институт практической психологи. Воронеж: 2001, 384 с.
6. Логинова В. И. Саморукова П. Г. Дошкольная педагогика. Учебник для студентов педагогических вузов (1 часть). Москва. 2005, 256 с.